



ՅԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Եթ. 8 ԱՐԻ 1925

### Տարեկան՝ 1 ստեղծինք:

ԲԻՒ 7-8  
ՅՈՒԼԻՈ-ՕԳՈՍՏՈՒ

Ա Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՆԺԱԽՈԹ ԷԶԵՐ ՄԱՅԹՈՑԻ ԵՒ ՆԲԱ  
ԱՅԱԿԵՐՏՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ ԸՍՏ ՕՏՐ  
ԱՂԲԻՒՐՆԵՐԻ

(Տարուասկոթիւն:)

**Պ**ըսկը պատրիարքի հայոց համար դրած  
թղթի հայերէն օրինակը խրատական է:  
Նա ցցց է տալիս թէ ինչպէս էին այլոյն  
պատմական վաւերագիրները դաւանաբա-  
րում պահպանում:

Պրոկլի նամակի յունարէն բնագիրը, որ  
սպուած է Mansi, Թ. Հատորում եւ արտա-  
սպուած Migne, P. G. 65, 856, Հաշում է  
Ա—ԺԵ ԳԼՈՒԽ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ,  
Ո զետեղուած է ԳԻՒՔ ԹՂԹՈՉ ՍԻՇԱՏԱԿԱ-  
ՐԱՆՈՒՄ, տասնեւհինգ ԳԼՈՒԽԵՐԻ ՊԱՀԵԼ Է ԲԻԱՅՆ  
Թ. — ԺԵ: Ասորի ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՈԵԼ  
Է ԶԱՔԱՐԻԱ ՀՈԵՄՈՐԻ ԵԿԵՂԵցական պատմու-  
թեան մէջ<sup>1</sup>, Սա եւս մեզ ՀԵՄԱՔՐԱՊՈՂ ԿԵ-  
ՄԱԵԿՆՈՒՄ ՊԱՆԱԳԱՆՈՒՄ է յունարէնից, բայց չե-  
մապէս հապէս հային: Մեր ՆԻՄՅԸ ՊԱՀԱ-  
ՅԱՅՆ ՎԵՃԵՐԻ ՄԱՔԱԳՈՅ ՄՋՆՈՂՐՄՈՒՄ:

χριτική ήταν αποτέλεσμα της φυγής της στην Αίγανη, όπου ο Κάρολος Βίβελος παρέδωσε την πόλη στην Ελλάδα. Το μεταξύ, ο Κάρολος Βίβελος επέστρεψε στην Αίγανη για να πάρει την πόλη, αλλά η Ελλάδα δεν έπιασε την πόλη και ο Κάρολος Βίβελος έφυγε στην Αίγανη.

Հայը թարգմանում է. «Եւ զայս ամենայն  
զի գրեցաք առ ձեր սէր այդր, զի լու եղեւ  
մե զ եթէ արք ոմանք ժանդախաւաք, ցնորա-  
խաւաք անկան [ի] յաշխորհ այդր եւ կամին  
ժանդափուտ<sup>1</sup> իմն գրովք, հակառակութեամբ  
ստարան [իր] ստախորհուրդ գիտութեան<sup>2</sup> խոտու-  
րել զպարզամտութիւն, զանպաճոյչ զանմեքեւ-

բել ՎՐ ՀԵ ՆԱՅ, զուղղափառ գելն հաւատոցն ։  
Բնագրի ընդգծուած տողերը, որ նշանաւ  
կում են, «գրում ենք դրդուած ձերդ թղթից  
որ զոկել էիք մեզ», թողնուած են հայ թարգ-

1. Յօրին. ժանդաժող = πόνησις, զոր Արդանեան  
ու զլել է ժանդաժող, WZKM, 1913, էջ 422 և Հանդ.  
Ամս. 1920.  
Հանդ, գիտութեամբ, ու զլել է Գիտութեան =

*γνώσεως· οὐαγγελιῶν ὁρθόδοξον, οὐτε αἰτιαρ τε καὶ φημι.*

Digitized by srujanika@gmail.com

<sup>1</sup> Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor, ed. Ahrens u. G. Krüger, 1899, Teubner's *Ἑρμηνεία Μυτιληναϊκής Βασιλείας. The Syriac Chronicle of Zacharia of Mytilene*, ed. Hamilton and Brooks, 1899.

մանութեան մէջ։ Յունարէնից երեւում է, որ  
պատրիարքի գրութիւնը մի պատասխան է այն  
դիմումին, որ արել են հայերը։ Մինչդեռ հայն  
այնպէս է ձեւացնում, իբր պատրիարքից է ծա-  
գում նախաձեռնութիւնը, որը լսելով — “Լու  
եղեւ մեզ” — հաւատին սպառնացող վտանգը,  
հարկ է տեսել զգուշացնել թղթով համբին։

Ասորի. Թարգմանութիւնը եւս ձգած է  
յիշեալ տողերը, բայց չի փոխարինել ուրիշ  
բանով. Ասորին նայում է թղթի վերայ իրբեւ  
մի կարեւոր դաւանաբանական գրութեան եւ  
հանել է այն տողերը. որպէս զի թղթին ընդ-  
հանուր բնաւորութիւն տայ եւ ոչ լոկ հայկա-  
կան: Երեւել, նոյն նպատակով է, որ մի կողմէ է  
նետել եւ սկզբի ներածական խօսքերը.

I. Οὐδ μετρίως, ἀδελφοί, συνέχειν ἡμῶν  
τὴν φυχὴν καὶ τὸν λογισμὸν τῇ τυράννῳ λύπῃ  
καὶ ἔτρωσεν ἡ φήμη τῶν νεαρῶν τῆς ἀπάτης  
ζεῖανιν, ἀπερ ἐναγχος τῇ ὑμετέρᾳ πανούργως  
ἐπένπειρε χώρᾳ δικαιοσύνῃ.

Հայերէնի մէջ եւս պակասում են այս խօսքերը, ինչպէս եւ հետեւեալ ութ գլուխները եւ նրանց փոխարէն գտնում ենք հայ ինքնասիրութիւնը շոյող յառաջարան։ Թւում է, որ եւ այս կետում սոտք ձեռք է սահել զրոկի թղթի վերայից։

Բարեբախտաբար կնիք հաւատոյ կարե-  
ւոր գործը, որ վերջերս լցու տեսաւ էջմիածին,  
լրացնում է թերի գլուխներից Գ—Թ եւ պար-  
զում է յառաջաբանի ծագումը: Սակայն պիտի  
խոստովանենք, մեր կասկածները դեռ չեն փա-  
րատում ողջովին:

Նոր ստանալով շնորհակալութեամբ Մես-  
րոր արքեպիսկոպոսից Կնիք հաւատոյ եւ ծա-  
խթանալով Հ. Վարդանեանի յօդուածին, ՀԱ  
1921 թ. շնորհիւ Հ. Համազասպ Ոսկեանին, չենք  
կարող անպայման յարիլ այն կարծիքին, որ  
պաշտպանում է Կարապետեպիսկոպոսիր ներա-  
ծութեան մէջ եւ որին համարտ է Հ. Վար-  
դանեանը:

Վերջինս ընդունում է, որ Եղիշիկի առողջությունը Սահմանական հայոց հայրապետ եւ առ սուրբ Մատթայոց մեղյականը, թղթերի անկումով կամ ետեւառաջութեամբ խառնուել են Պրոկլի թղթին եւ կազմել մեկ ամբողջութիւն ու Եղիշիկ անունն ել տեղի է տուած Պրոկլի: Միանգամայն հնարքաւոր է:

Սակայն խնդիրն այն է, որ Եղիշիկի թուղթը գրուած է միմիայն Մաշտոցին, ինչպես վկայում է Կնիքը («զօր զբեաց ի և. Պոլիս առ երանելին»

Մաշդոց, էջ 130) եւ հաստատում է թղթի  
ոճը, ուր խօսում է եղակի դէմքով (‘աղաւթից  
քոց [իմա աղաւթիւք քոյ] տեառն սրբութեան,  
ընթերցումը գերադասելի է քան աղաւթիւք  
ծեր, Կնիք, 130): Հետեւապէս, քանի որ Պրոկլի  
նառնակուած թուղթը սկսում է Եղնիկի յա-  
ռաջաբանով, պէտք էր սպասել, որ Վերնագիրը  
եւս լինէր Եղնիկ առ Մաշդոց:

Միւս կողմից Եվնիկը թուղթը հասարակ մեղյական չէ եղել: Կնիք ի մեջ նորա անունով մի դաւանաբանական հատուած կայ (Էջ 51), որ հաւանօրէն առնուած է նոյն առ Մաշթոց թղթից: Խրեւում է, որ նրա թուղթը անդրանիկ հաշիւ է այն խնդիրների, որոնց համար հայերը սպասում էին Պրոկլի գրութեան: Գուցէ եւ Եղնիկն է վերջնիս բերողը եւ Թարգմանիչը (ուրիշ տեղ Նկատել ենք թղթի «աչք բժարեր» նաևսադասութեաննմանութիւնը Ըստդէմ աղանդոցի սկզբի «զաղտն եւ զբիժն» եւ այլ):

Եղնիկի եւ Պրոկլի թղթերը սերտօրէն կա-  
պուած են միմէանց եւ բնաւ արհամարչելի են-  
թադրութիւն չէ, որ մէկի յառաջարանը կամաւ  
կցուէր միւսին մի ամբողջութիւն կազմելու եւ  
Պրոկլի բերանը զնելով Եղնիկի Խօսքերը Սահակի  
եւ Մաշթոցի հեղինակութիւնը բարձրացնելու  
համար: Աւելորդ կասկածամութիւն չէ, քանի  
որ օտար միջամտութեան հետքերը Պրոկլի  
թղթում անուբանալի են: Ուշագրաւէ այստեսա-  
կէտից եւ նրա վերջաբանութեան մի կտրը՝  
որ չկայ յունարէնում, եւ ուր յիշւում են  
Նեստոր եւ Թէոփոր («եւ մի ի նզով ի դժոխու-  
կործանեսցին»): Այս Խորթ յաւելումը ար-  
դեօր նոյն եղնկեան թղթից չէ առնուած: Ինչ  
եւ լինի նրա ծագումը, անպայման, միտումա-  
ւոր յաւելուած է, որ նպատակ ունի լնդ առաջ  
գնալ Սահակի եւ Մաշթոցի պատասխան-թղթի  
մի կարեւոր կէտին:

Սրանք իրենց պատասխանում նախ հաւա-  
տացնում են, որ միջոցներ են ձեռք առնուած մո-  
լորովեան դէմ. “Թշթղոյդ տրտմակից եղեալ...”  
յամենայն տեղիս որ շուրջ զմեւք բնակեալ էին  
յլիկացաք մեծ եւ պատուհասալից պատուիրանաւ  
մի լսել բնաւ ամենեւին դայդպիսի պարագանոս

Հարաբարակիւ է պրոլիտ [թուղթը 1890 ին պատկեր թերթում՝  
կարծում է որ յաւելուածը պատկանում է Ավրեբասի ժամ-  
ախուած Բարսեղ սարկաւագին։ Բարսեղը հայ շրջաններին  
մարդ է, նորա ազգեցութեամբ կարող էր Եղիսկի յիւել-  
այն անունները, որից այնպէս խոսափամ էր զգուշաւոր  
Պրոլիտ, և թէ ընդունեաբ, որ յաւելուածը Եղիսկից է առ-  
անած։ Այս մարզով իրաւացի է Զենդայեանի կարծիքը։

(երեւի, բորբորիտու), մի ընդունել ամենեւին զվասարեր կորստական մոլորական հերեսիութեան վարդապետութիւնն (էջ 10):

Իսկ թղթի վերջում յայտարարում են. «Եւ որ թէոդորեայ Մամուեստացոյ աշակերտեալք իցեն առ ժամանակս ի շնորհացն Աստուծոյ այնպիսի ինչ աստ չեւ է յայտնեալ, ապա թէ իցէ ծածկեալ ի ժանդոյ աղտեղութեան, ի հարկէ չան լիցի մեզ խլել զնոշն եւ զգայթակղութիւնն դպյն ի միջը ի բաց կորուսանել» (էջ 13):

Օտարութի են թէոդորի հասցեին ուղղուած խօսքերը: Երեւում է, որ որոշ հարցի պատասխան է: Սակայն Պրոկլի թղթում այդպիսի հարց չկայ, եւ թէոդորի անունը չի յիշում: Ակամայից կասկած է ծագում պատասխանի հարազատութեան դէմ: Աւելի ճիշդ ասած, թւում է թէ ուրիշ թղթի պատասխան է: յարմարացրած Պրոկլի թղթին:

Եւ յիրաւի: Մելիտինի եպիսկոպոս Ակակի թղթը առ սուրբ Սահակ հայոց հայրապետ, Գրութեան մէջ, կարդում ենք.

«Բայց մեզ երկիւլ է թէ գուցէ ի թէոդորեա <J> Մամուեստեայ ուսմանէն (Յօրին. ոխմանէն) աշակերտեալ ոք գտցի եւ ի չար ժանդէն Նեստորի ի միամիտ անձինս ազդիցէ. զի զնորա մնացեալ գրեան, իրբեւ ինդիրս այս յայտնեցաւ եւ մանաւանդ որ վասն մարմնախառին գրեալ էր, վճիռ հրամանի ետուն սուրբ աշխարհաժողով եպիսկոպոսացն որ յշփեսացւոց քաղաքին եղեւ ի մի մի վայր ժողովել զընաւ դրեանն եւ այրել» (էջ 15):

Անտարակցոյ, Ակակի այս երկիւղն է այն ևադրելի կէտը, որ պարտաւորացրել է յիշեալ Վեհակի պատասխանը: Ուրեմն Պրոկլի թղթի պատասխանը նկատի ունի Ակակի եւ ոչ Պրոկլի թղթը:

Մեզ հասած է, սակայն, եւ Ակակի թղթի պատասխանը: Խնդիրն այն է, որ այդ պատասխանը ոչնչով չի զանազանում այն թղթից, որ կրում է «պատասխան թղթոյն Պրոկլի», վերագիրը: Միեւնոյն գրութեան կրկնակի պատճեններ են ըստ էութեան: Տարբերութիւնն այն է, որ Պրոկլի պատասխանի մէջ մուծուած է մի հատուած, բաղկացած գլխաւորապէս հաւատուած բացի դրանից թէոդորին վերաբերա կէտը Ակակի պատասխանում համառօտ է եւ առանց անուան յիշատակութեան, այսպէս. «այլ յաղանդցն որ գրեցեր գարշել առ ժամանակս ի շնորհս աստուծոյ, այսպիսի ինչ չեւ է հասեալ. ապա եթէ իցէ ինչ ծածկեալ ի ժան-

գոյ անտի ի հարկէ ջան լիցի ելել զնոշն է միջոյ, (էջ 18):

Կարելի էր կարծել, որ միեւնյն թղթի օրինակներն, որքան եւ անպատեհ, զրկուած են եւ Պրոկլին եւ Ակակին: Բայց քանի որ վերեւ պարզեցինք, որ Պրոկլի թղթն հետեւանք էր հայոց գիմուտի եւ իբր դաւանաբանական ճառ հաւատոյ մասին, ուրի ուստեւ պատասխանի պէտք չունէր, մնում է ենթագրել, որ թղթը սկզբնապէս միայն Ակակի համար է եղել պատրաստուած: Յետագայում նոյն օտար ձեռքը, որ Պրոկլի թղթին այն ձեւն է տալիս, իբր թէ նա է առաջին գրողը եւ հայերը՝ նրան պատասխանողը, նոյն ձեռքը հարկադրում է կազմել կեղծ պատասխան առ Ակակի թղթի հետեւութեամբ:

Այս տեղի է ունեցել կոմիտասից յառաջ, քանի որ կնիքը հաւաստոյն արդէն ծանօթ է Սակակի եւ Մաշթոցի պատասխան թղթին (էջ 129) Արդեօք այս միջցին է մուծուած եւ վերսիշեալ յաւելուածը Պրոկլի թղթի վերջաբանութեան մէջ, որպէս զի արդարացուին Սահակի եւ Մաշտոցի պատասխանի ակնարկները թէոդորի հասցեին: Եզնիկի եւ Պրոկլի թղթերի խառնումը պատահական թէ դիտաւոր կոմիտասից յետոյ է: Եթէ ընդունեանք, որ դիտաւորեալ է, յաւելուածը պիտի վերագրել այն ձեռքին, որ խառնել է յիշեալ թղթերը, վերցնելով այն Եզնիկից<sup>1</sup>: Թէոդորի անուան հանդէպ որոշ նրան կատարելութիւնը հասկանալի պիտի լինի մանաւանդ եթէ չմոռանանք նրա մերձաւոր ծանօթութիւնը Մաշթոցի հետ:

Մեզ հետաքրքրող թղթերի վերայ նկատելի է Զ. դարի դաւանաբանական վէճերի հեռաւոր սուրերը: Յայտնի է, որ Եփեսոսի ժողովի գրոծերը եւս զերծ չեն Ե. տիեզերական ժողովի շնչից: Վեցերորդ դարի առաջին կիսում, երբ հայ եկեղեցին մարտնչում էր նեստորականութեան դէմ, բնաւ ցանկալի չեր ցցց տալ, որ նեստորի ուսմունքը յայտնի էր հայերին՝ տակաւին հայ դպրութեան արշաւութեան առաջական պատասխանութեան մէջ:

1. Հ. Արքանեան իր ընտիր սբբագրութեան մէջ հանում է բնագրից մանաւուն թմբանց եւ Մարեթունեացն կամ Մաշթեայ եւ Մարաթովագոյ առեղջուածոյն անունութեան անունները կարող են, եթէ վարզուեն, թերեւու ժամանակաշրական նշանակութիւն ունենալ: Մարաթունը հիմնացացից գրական նշանակութիւն ունենալ: Մարաթունը հիմնացացից գրական նշանակութիւն ունենալ: Կարեգոնի հետեւորդը, ուստի եւ երեւմն ուրա անունով է. կուռում Մակեդոնի աղանդը, ինչպէս վկայում է Սոլորա, Ակ. պա. II. 45: Այս ու Մարաթունացու անունութեան առունք, Յելլում է նաև Սոկերերան. Ազուս, Եսոդուս, Մարաթանուս, Migne, P. G. 59, col. 569.

խոտելի պիտի թուէր Մաշթոցի եւ կամ Սահակի ծանօթութիւնը Նեստորի ուսուցիչ Թէոդորի հետ:

Ակակի եւ Պրոկլի պատասխան թղթերում մեղմացրած են այն տեղերը, ուր Խօսքը Թէոդորի եւ Նեստորի մասին է: Ինչպէս վերեւ բերած կտորներից կարելի է տեսնել, միանգամ խոստովանում են Նեստորականների գործունէութիւնը, ասելով որ ամէն կողմ մարդ է ուղարկուած մէծ եւ պատուհասալից պատուիրանաւ մի լսել բնաւ ամենեւին զայդպիսի բարբարոսս: Խկ միւսնգամ կարծես ժխտում է. “ի շնորհացն աստուծոյ այնպիսի ինչ աստ չեւ է յայտնեալ”, աւելացնելով զգուշութեամբ “ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղտեղութեան”:

Ակակի երկրորդ թուղթն, ուղղուած հայ Նախարարներին, վկայում է, որ արդարեւ Նեստորական քարոզը մուտ էր գործել Հայաստան, “Աղաչեմք, մի ոք զձեղ խարեսցէ, գրում է Միւլեթինի եպիսկոպոսը, մի պատուականութիւն երեսաց, մի բազմութիւն, մի թողացուցուք զջմարիտ հարցն կրաւնս եւ զհաւատորով հաւատացայքն, որով ապրեցայքն, զայս հարկեցայ գրել առ սէր ձեր. զի ի գալ առ մեղ սիրելեաց մերոց երիցանց Հռնայ, Քոթայ, Անձնայ, պատմել մեղ զբարի գործսն զոր գործիցէք, զի զգրեալսն Դիուլորի կապեցէք, կնքեցէք: Արդ մի ոք հաւանեցուցէ զձեղ տալ անդրէն զայնոսիկ, որք փութով եւ ախորժելով ստանան զայն ի կործանումն ստացողաց նոցա եւ լսաւղաց. զի եթէ Նեստորիս վերացաւ յամենայն եկեղեցեաց, զիարդ Դիուլոր <ի>ն գիրքն եւ ուսումն (յօրին, խումն) ընդունելի իցէ, որք զնցն միուն եւ վեասակարութիւն ունին (էջ 21):

Դիուլորը Թէոդորի ուսուցիչն է. վերջերը նրան եւս յայտարարեցին եկեղեցական հայրերը մեղապարտ Նեստորականութեան համար: Սահակի ժամանակ կասկածի տակ էր բանուած Թէոդորը: Սորա մասին էին գրել հայերին թէ Ակակը եւ թէ Եղեսիայի եպիսկոպոս Ռաբուլը: Այս երեւում է ոչ միայն Ակակի քանիցս եղած թղթից, այլ եւ Վիրերատի վկայութիւնից, որ բերեցինք վերեւ: Թէոդորի տեղ Դիուլորի յիշատակութիւնը արժանի է ուշադրութեան:

Դառնանք այժմ Կորիւնին, Մաշթոցի կենսագրին: Կորիւնին քաջ յայտնի է Թէոդոր Մամուեստացու անուան շուրջը յարուցած աղմուկը: “Յայն <մ> ժամանակի, պատմում է Կորիւն, բերեալ երեւեցան Հայաստան աշխարհին գիրք ու տատապատումք, ընդունայնախաւս աւանդութիւնք

առն ուրումն հոռոմի, որում Թէոդոր <որ> իսս անուն: Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետաց եկեղեցեացն սրբոց Նշանակեալ ազդ առնէին Ճշմարտահաւատ փառւարչութիւն Սահակայ եւ Մաշթոցի: Եւ նոցա Ճշմարտասէր փութով զայն ի միջյ բարձեալ աշխարհայալած արտաքոյ իւրեանց մերժեցին, զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէն:

“Այր ոմն հոռոմ Թէոդորիս անուն, որ իրաւամբ ուղղելի է Թէոդորոս (թերեւս ձեռագրի Թէոդորոս սխալ լնթերցմամբ Թէոդորիս) ու այլ ոք է եթէ ոչ Մամուեստայ յայտնի եպիսկոպոսը:

Այս մասին կասկած լինել չի կարող: Օտար աղբիւրներից յայտնի փաստերը, որոնց վերայ ծանրացանք վերեւ, հաստատում են Կորիւնի խօսքերը, այլ եւ նոր լոյս են սփռում հայ հեղինակի կցկուուր տեղեկութեան վերայ: Միւլեթից Մաշթոցի աշակերտի եւ կենսագրի կարծես ակամայ խոստովանութիւնը Թէոդորի մասին նշանակալից է եւ վկայում է յօգուտ Առօտօնիոսի առաջարկածս սրբագրութեան:

Կորիւնի երկը քննութեան պէտք ունի, ո՞թողնելու է ուրիշ անգամուայ, որպէս զի չշեղուենք մեր անմիջական խնդրից: Նկատենք, սահայն, որ Մաշթոցի կենսագրիը շատ հեռու է բաւարարելու այն պահանջներին, որ կարելի առաջադրել մի աշակերտի, որ գրում է իր ուսուցիչ կեանքքը: Կորիւնը, որպան ճուռումարան, նոյնքան սակաւագէտ է: Գուցէ եւ աւելի գիտէ, քան յայտնում է մեղ: Խոստմալից յառաջանը, ուր ուզում է նաւել զհամատարած աշխան վարդապետական ծովունին, նման է շքել մուտքի, որ տանում է մի խեղճ տնակ: Ուստի եւ վերջանութիւնը, ուր յայտարարում է որ “ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալն մատենագրում է, այլ որոց մեր իսկ ականատեսելի բղեալ”, թողնում է բոլորովին հակառակ տպաւորութիւն:

Ականատեսից շատ աւելի կարելի էր սպանել, մանաւանդ այնպիսի խնդրում, ինչպէս է հայ գրի եւ գպրութեան ծագումը: Մաշթոցն աւելի քան արժանի էր, որ երախտապարտ սերունդը գիտենար նրա կեանքը եւ նշանաւոր յղացման մանրամասնութիւնները:

Պարիս:

(Տարուհակենի:)

ՊՐՈՓ. Ն. ԱԴՐՈՅՑ